891.99
U-84

17669

Գ. Սուքասյանի կրտսեր «Աշուղ» խմբ.

20 03

9999-2h

.542-18
ս-79



36



Գաբրիէլ Սանդուխտեան. 1912 5/IV-ին.

6988-57

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆ ԴՈՒԿԵԱՆԻ ԿՏԱԿԸ

Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ ՆԱՄԱԿԸ «ՄՇԱԿԻ» ԽՄԲ. ԱՆՈՒՆՈՎ

—

«Մշակ» լրագրի խմբագրութեանը.

Խոնարհաբար խնդրում եմ տեղ տաք այս իմ կտակին ձեր պատուական լրագրում անմիջապէս իմ մահից յետոյ, տալով միւս լրագրերին իրաւունք արտատպելու, եթէ կամենան։

Խորին յարգանօք

Գաբրիէլ Սունդուկեանց—Համմալ

15 օգոստոսի

1911

—

ԻՄ ՄԱՀՆ ՈՒ ԹԱՂՈՒՄԸ

Մնաք բարով, 'ես գնացի. գնացի էն հանգի տիղ, վուրդանց, ինչ աշխարքը ստիղծվիլ է, ջեր օչով չէ յիդ էկի։

Դուք լաւ ըլիք, էրգար օր ունենաք, ջանով առողջ ըլիք, սրտով ուրախ, հոքով հանգիստ։

Ինչ գէթ իմ արի օմքընու, խնդրում իմ բախշէ. ով ինձ է գէթ արի ու դաղիլ է սիրաս, 'ես էլ բախշում իմ իստակ սրտով. խնդատանքը վունչիչ դնամիչ չանէ իրան իր օրումը։

Ինձ թաղելիս վունչիչ թանթանէք հարկաւուր չէ։ Տան կարք ու սարքին ձեռը չը տաք զարթի իմ բանելու ու քնելու օթախին, վուրդի իմ յաւիտենական քնելու գողինքը պիտի պատրաստիք։ Մնացած օթախնիրը էնենց մնայ, վունցոր կայ, ինչրի ինձ կու թաղէք, իմում դուք դրդիք։

Սիւիր վունց մէ օթախումը չըլի ու դուք էլ, իմ աղիղ Սօֆի ջան ու սրտով սիրած վուրթիքս ու թուռնիրս (Chère Hélène) վուր իսկի էլ սիւիր չը հաքնիք, խիստ լաւ կ'օնիք։

Վէնօկնիր (պսակնիր) մէ հատ էլ չըլի, վունց տանը, վունց դուսը, վունց դուք շինիլ տաք, վունց ուրիշիմէն ընթունիք. վաղօրօք էէտ յայտնեցէք, վուր օչով չնիղանայ։

Կուրօ (դագաղ) դրէք ինձ իմ սիւ սերթուկով ու մորթէ իմ սիպտակ գդակով։

Իմ թաղումից առաջ՝ տանը վունչիչ պանիխիդէք (ամբիծքներ) չըլի. մենակ իմ տանու քահանէն հերիք է, վուր եկողներու համա մէ «Հայր մեր» ասէ, վունցոր վաղ կարք էր։ Ու թէ հիռաւուրնիրն ու եաղիրը իսկի էլ չնիղանան, չգան ու ամեն սահաթի մէկ-մէկու էդնէն կնգաս ու վուրթկերանցս նուրմէկանց չլացցնին, աւելի լաւ կ'օնին։

Նրանցմէն ով ուզում է իր սրտի ցաւը յայտնի իմ դէրը, թող իր այցեստոմսը տայ դուներումը կամ թէ չէ, էնդի էէտ դաւթրումը գրէ իր անումը, վունցոր լուսաւուր երգիրներում ընթունած է։

Մոռացայ իր տիղն ասիմ, վուր գաղէթնիրը չլցցնիք անթիւ ու անճուռնի յայտարարութիններով ու անտեղի խօսկիրով։ Ով չի գիդի, վուր դիփունի համա, ով ինձ սիրում էր, ես խիստ սիրեկան ու թանգագին իմ էլի, համ էլ էտ խօսկիրը շատիրը մէկ մէկու մտիկ տալով, մինձ ու դառը, խիստ դառը կսկիծով ին յայտնում։

Մնալաս։

Իմ մահվան յայտարարութիւնը դրեցէք առանց չ[illegible] յայտնելու. էսէնց՝

«Գաբրիէլ Սունդուկեանց—Համմալը մահաճանվեց (Ժամա[illegible]), յուզտրակաւորութիւնը տեղի կ'ունենայ (օրը), առաւօտեան (ժամը) հանգուցեալի բնակարանից, և այլն»։

Ինձ թաղելու օրը մէ քահանայ ըլի մենակ—իմ տանու քահանէն—իմ առիւը գնացող ու մէկ էլ մէ տիրացու նրան ծառայող։ Ուրիշ քահաներու, ուրիշ հոգևորականների օչով չխընդրիք ու չնիղացնիք։

Ծառայութենի խաչիր ու նշաննիր վունց բալըշնիրով, վունց առանց բողչի իսկի չըլի։

Իմ առիւը գնացող քահանէն ու տիրացուն սուս ու փուս գնան իրանց ճամփէն տանէմէն ինչրի էգեղեցին ու էնդանց ինչրի գերեզմանս. ճամփին վունչինչ շարական ու բարբրաձայն աղօթքնիր չըլի։

Թանգագին Սօֆի ջան ու թանգագին զաւակնիրս. դուք համաչա խելօք իք էլի. դուք գիդիք, վունցոր սրտէներուդ կու դայմացնիք ինձ ճամփու գցելիս։

Ամփոփան ու ուրիշ ցէրէմոնիէք իսկի չըլի. իլաիմ թէ ձիանեարու գլխին էն բմբլէ թայիդուլնիրը սարքած, վուր ինձ ճիճինի է բերում։ Ութ համալ ու ութ կինտօ մեծրեցէք, հիրթով ծտի պէս կու թոցնին ինձ։

Կուլի նրանց մէջը դուրթ Պէպօ էլ ռաստ գայ, էտ խիստ մինձ պատիւ կուլի իմ Պէպօի համար։

Վիրչը թաղեցէք ինձ, վուրդի էլ գուզիք։ Ես գ'ուզէի իմ մօր, մօդ, ամա, էնդի տիղ չկայ. նրա մօդ թաղած էրեխերքս թարժամ չըլին։

Գերեզմնիս վրայ վունչինչ արձան հարկաւուր չէ. մէ սիւ քար ու իմ ջանը։

Վրէն գրիլ ուէք Էսէնց՝

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ—ՀԱՄՄԱԼ

Ծնվել 1825 թ. [illegible] 20-ին

Վախճանվել 191[illegible] թ. [illegible]-ին

Թէ սրտում [illegible] էս արձան իք ուզում ու արժանի [illegible] համարիք, էտ արձանը, իս [illegible], Պէպօի համա կանգնեցէք [illegible] կու սաղ դայ։

Սաղ բ[illegible] ըլի բայց պատուանդա[illegible] հագուստով, գդակը ծածկ[illegible] Արութինի բարաթը, մէկէ[illegible] էն գրածն ըլի ցոյց տալի [illegible] գլխաբաց ու սերթուկով [illegible] գրած կշտին։

Տակը պատուան[illegible] գրած ըլի մենակ էս խօսկի[illegible]

Պ Է Պ Օ

«Էս քու կոտրած ձեռքով չի՞ս գրի՛...»

Էն արձանն ու պատուանդանը թուջէմէն ըլի ածած ու չինած. վրէն վունց մէ տիղ իմ անումը չյիշիք։

Իմ ցանկութինը էն է մենակ, վուր դիփունի սրտումն ու մտկումը հիդն ու հիդը աւելի ու աւելի հաստատվի էն հասկացողութինը, թէ հաշա ուտիլը (ուրացութիւնը) մինձ ամութ բան է մարթու համա ու ով իր պարտկը չի ճանչնայ, իր տված խօսկը չի կատարի, իր ձեռք քաշած թուխտը կու ուրանայ՝ նա մարթ չէ, ինչքան գ'ուզէ բայը ըլի կանգնած մարթկերանց մէջ։

Գանք հիմի ասածներուս կատարելու վրայ։

Պէպօի արձանը շատ հիռու բան է. էստու համա օչով չնիղանաք հիմի ու անմիդ ժամանակ [illegible]։

Իմ թաղումն ինչ գուզ[illegible] պարտքն է, էստու դանրը կնիկս ու վուրթիքս կու քաշին էն [illegible] կարողութենէմէս, վուր թողնում իմ նրանց համա։

Քելէխ-մելէխ իսկի հարկաւուր չէ. էն օրանն ախբտներու ճաշի փուղը իմ տանէմէն կուտաք Հայոց Բարեգործական Ընկերութենին նրանցը բաժնելու։

Մնաց իմ թաղումի կարք ու սարքի կատարիլը, վունց որ գրիլ իմ էստի վերիւը։ Սրա համար յատուկ խնդրում իմ «Մշակ» լրագրի յարգելի խմբագրութենին, իմ սրտակից բարեկամներուս, աչքիս լուս կնգաս ու վուրթկերանցս աշխատին ճշտութինով գլուխ բերին ասածս ու խնդրածս։

Մնաք բարով։

Մնաս բարով, իմ թանգագին Սօֆի ջան։

Մնաք բարով, թանգագին զաւակնիրս։

Մնաք բարով, սիրելի բարեկամնիրս։

Մնաք բարով, սիրելի մարթիք, ինչ ասկի, ցիղի ու հաւտի էլ ըլիք։

Մնաս բարով, սիրած թիֆլիզ քաղաք։

Մնաս բարով, իմ սիրելի ու պաշտելի ասկ։ Աստուծ վաթանիդ արժանէ անէ։

Դիփունիդ սէրը սրտումս խուզը թաղած, տանում իմ հիդն։

Մնաք բարով։

Գաբրիէլ Սունդուկեանց—Համմալ

14 օգոստոսի

1911

Բ ո ր ժ օ մ։

ՍԵՆԵՖԵՐԻՄ ԱՐԾՐՈՒՆԻ — ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ — ԲԺՇԿ. Բ. ՆԱԻՍՍԱՐԴԵԱՆ — ԳԷՈՐԳ ՉՄՇԿԵԱՆ
Անգուզական Պէաս

Գաբրիէլ Սունդուկեանի ամենավերջին պատկերը լուսանկարուած 1911 թ. սեպտեմբերի 11-ին

Ներքևականութիւն ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ

ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

Լուսանկարից ԳՐԻԳՈՐ ԲԱԲԱԼԵԱՆ



ՄԱՀԱԳՈՅԺ

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ

Ուրբաթ, ներկայ մարտի 16-ին, ժամեկոյեան 10 ժ.-ին խաղաղ հանգաւ ի Տէր 87 տարեկան հասակում մեր անզուգական դրամատուրգ ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԸ։

Այնքան մեծ է մեր կորուստը, որքան խոր մեր վիշտը, որ այսօր մենք անզօր ենք արտայայտելու մեր զգացումները, մատուցանելու մեր յարգանքը Նահապետ Դրամատուրգին։

ՏԱՐԱԶԻ հերթական №-ը արդէն պատրաստած էր, երբ հարուածը դղրդացուցիչ աշխարհի վրայ։

Հայոց Դրամատուրգի մահուան քառասունքին լոյս կը տեսնէ Տարազի յատուկ ալմանախ, ամբողջովին նուիրուած Գաբրիէլ Սունդուկեանի յաւերժ յիշատակին։ Այդտեղ կը զետեղուին Նահապետ Դրամատուրգի շուրջ նրա լայնամասշտաբ էպոխը՝ մագմաթիւ նկարներով, պատկերներով, պատմուածքներով և յիշողութիւնով։

Մահուանից հազիւ հինգ օր առաջ ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԸ գալիս է մեզ տանելու ցոյց տալու իր նուած տունը և այն տունը ուր նրա սիրտը մեծացել էր...

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԸ մասնաւանդ այս վերջին տարիներս այնքան էր մտերմացել մեզ հետ, այնքան էր ջերմ նրա վերաբերմունքը դէպի մեզ և մեր գործունէութիւնը, որ նրա այսքան յանկարծակի մեզանից երկինք սլանալը հաւասար է, նամանաւանդ մեզ համար, մեծ աղէտի։

Լ. Տօլստոյի ԿԵՆԴԱՆԻ ԴԻԱԿ պիէսից մի հատուածի թարգմանութիւնն էր վերջին գործը, որ տպագրուեց Տարազի նախորդ տարւայ № 11-ում, որ յատկապէս թարգմանել էր մեզ համար Լ. Տօլստոյին Գրական-Գիւղագիտական սալօնում մատուցանուելիք երեկոյթին կարդալու։

Ողսանա Գաբրիէլ Սունդուկեանի անմահ յիշատակին։

Հ. Ա.

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ

Հին մարդկերի հատուածներ

ՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ ծնուել է Թիֆլիս Անչիսխատ թաղում յունուարի 1825 թ.։ Մանկապարտէզ գրթունքին Գաբրիէլը յանձնուեց մանակի հռչակաւոր հայագէտ Շահան Զրպետին, որն իր ֆրանսուհի ամուսնուհու հետ ստանձնեց սկզբնական կրթութիւնն ու դաստիարակութիւնը այն բացառիկ ջենտլմէն Գաբրիէլ Սունդուկեանի, որը մնաց մինչև օրս էլ, իբրև եզակի բացառութիւն, վերին աստիճանի քաղաքավարի, զգայուն, քնքոյշ։ Պարիզուհի դաստիարակչուհի տ. Զրպետը, հարազատ մօր գորովով սնուցարեց Գաբրիէլին, գեղեցկի և բարիի ճաշակը պատուաստելով նրան։ Եօթ տարին, որ մնաց այս ամուսինների հովանու տակ, անշուշտ բաւական էր կազմակերպելու և հիմք դնելու մանուկ Գաբրիէլի բնաւորութեան։ Այստեղից Գ. Սունդուկեանին 1838 թ. տեղափոխում են Արզանով եղբայրների պանսիօնը, ուր ուսուցանում էին բացի տեղական և ռուսերէն լեզուներից՝ նաև լատիներէն ու ֆրանսերէն էլ։ Երկու տարի մնալով այստեղ 1840 թ. մտնում է Թիֆլ. ազն. կլասիկ. գիմնազիօնը և 1846 թ. աւարտելով անցնում է Պետերբուրգ, մտնում է պատմա-ֆիզիօլոգիական ֆակուլտետի արևելեան բանասիրական ճիւղը, ուսանելով արևելեան լեզուներ (հայերէն, վրացերէն, թիւրքերէն, պարսկերէն, արաբերէն) և պատմութիւն, աշխարհագրութիւն։ Աւարտելով համալսարանը 1846 թ. վերադառնում է ծննդավայր Թիֆլիսը և մտնում է Կովկասի փոխարքայի դիւանատունը թարգմանի պաշտօնով։ Սակայն գեղատեսիլ, կիրթ ձևերով երիտասարդ Գաբրիէլին շատ են հետամուտ լինում պալատն այցելող տիկինները, նրանով հրապուրուում են նոյնիսկ իր մեծաւորների կանայք և աղջկերքը, ու հետևանքը, իբրև աքսոր ուղարկուում է Դերբենտ քաղաքապետի մօտ իբրև առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ։ Կարճ ժամանակ մնաց Գ. Սունդուկեանն իր աքսորում, շուտով նրան Թիֆլիս կանչեցին և ստանձնեց պաշտօն ճանապարհների հաղորդակցութեան վարչութեան մէջ։ Այստեղ յիսուն տարի անբիծ ծառայելով և հասնելով քաղաքացիական ժիներալի աստիճանին, տասնալով շատ շքանշաններ, պատուանշաններ թողեց պետական ծառայութիւնը 1896 թ., ստանալով կենսաթոշակ։

Գ. Սունդուկեան երբէք չը լուսաբարեց աստիճանաւորի հագուստով հազիւ մէկը հրապարակաւ տեսած [illegible] մեծ դրամատուրգին իր փարթամ [illegible] աստիճանաւորի զգեստաւորուած [illegible] մարթուց իր փափաքի մէջ, սա[illegible] ասիացու [illegible] գլուխը ամենակիրթ և հրապուրուն հմայում, սքանչեցնում էր իր խաղաղ, չափած կշռած խօսք ու զրոյցով, կիրթ ոճերով և վերաբերմունքով։

Գ. Սունդուկեանը իր առաջին պիէսը Դիշերուան սաքը խէր է գրել է սրանից մօտ յիսուն տարի առաջ, իսկ ներկայացրել է Թիֆլիսում առաջին անգամ 1865 թ. Այդ ներկայացումից մի տարի յետոյ 1866 թ. հանդէս եկաւ Խաթաբալան, ապա Օսկան Պետրովիչը էն կինքումը, Էլի մէկ զոհ (1876 թ.) Պէպո (1871 թ.) Քանդած օջախ (1878 թ.) Ամուսիններ (1898 թ.) Կտակ (1911 թ.) դեռ ձեռագիր և ոչ մի անգամ ներկայացրած։

Պիէսները թարգմանուած են և վրացերէն ու ռուսերէն, Պէպոն ֆրանսերէն, իսկ Քանդած օջախը անցեալ տարի անգլիերէն լեզուով լոյս տեսաւ Նիւ-Եօրկում հրատարակուող ամերիկեան „Armenia“ ամսագրում։

Գաբրիէլ Սունդուկեան չը գիտէր այդ, և նրան հոգեկան մեծ հաճոյք էր պատճառում ամեն ամիս, երբ ստանում և մատուցանում էինք հեղինակին „Armenia“-ի №№-ը անգլիերէն տպագրուած իր Քանդած օջախը։

Նորերս լոյս տեսաւ Գաբրիէլ Սունդուկեանի Համալի մասալներները գիրքը, որի արդիւնքը ամբողջովին յատկացրել է Մշակի զարգացման համար որոշած ֆոնդին, իսկ Պէպոի իրաւունքը կտակել է Կ. Հ. Բարեգործական Ընկերութեան։

Տ.

17669

2013